

**6. Արդիականացված սահմանային անցակետերի գործարկում**

- ՀՀ պետական սահմանի «Բագրատաշեն», «Բավրա», «Գոգավան» անցման կետերի արդիականացում» ծրագրի ծրագրային փաստաթղթին համապատասխան արդիականացված անցումային կետերի գործարկում՝

2016թ. ընթացքում իրականացվել է Բագրատաշենի և Գոգավանի պետական սահմանի անցման կետերի տեխնիկական մեկնարկը և գործարկումը: Ընթացքում են Բավրայի անցման կետի արդիականացման աշխատանքները:

- Տարանցման հայտարարագրերի ներկայացման ենթահամակարգի ներդրում՝ ապահովելով փոխադրման ամփոփագրի փոխարինումը տարանցման հայտարարագրով

Տարանցման հայտարարագրերի ներկայացման ենթահամակարգն ընդունվել է շահագործման ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից:

- Նախնական տեղեկատվության տրամադրման համակարգի ներդրում

Նախնական տեղեկատվության տրամադրման համակարգն ընդունվել է շահագործման ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից:

**7. Հարկային վարչարարության կատարելագործում**

- Հարկային համակարգի կառուցվածքային սպորաբաժանումների օպտիմալացում՝ 4 տարածքային հարկային տեսչությունների վերակազմավորման արդյունքում հարկային տեսչությունների թվաքանակի նվազեցում (նախկին 22-ի փոխարեն կգործի 20 հարկային տեսչություն)

ՀՀ կառավարության 29.01.2016թ. թիվ 48-Ն որոշմամբ՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի Կոտայքի և Նաիրիի տարածքային հարկային տեսչությունները միաձուլման ձևով վերակազմակերպվել են՝ կազմավորելով Կոտայքի, իսկ Էջմիածնի և Արմավիրի տարածքային հարկային տեսչությունները՝ Արմավիրի տարածքային հարկային տեսչության, որի արդյունքում նախկին 22 հարկային տեսչությունների փոխարեն ներկայումս գործում են 20 հարկային տեսչություններ:

- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով չձևակերպված վարձու աշխատողների հայտնաբերման ուղղությամբ տարվող աշխատանքների կատարելագործում՝ գործատուների կողմից գրանցման հայտերի և աշխատանքային պայմանագրերի նույնականացման և գրանցման հայտերի ներկայացման ժամկետների խնդիրների կարգավորման նպատակով համապատասխան օրենսդրական նորմատիվ ակտերում փոփոխությունների իրականացում

04.10.2016թ. ընդունված ՀՀ հարկային օրենսգրքի (ՀՕ-165-Ն) 156-րդ հոդվածով նախատեսվել է, որ հարկային գործակալները նոր աշխատողին (բացառությամբ ՀՀ-ում բնակության իրավունք (կացության կարգավիճակ) չունեցող օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող ֆիզիկական անձանց) աշխատանքի ընդունելուց հետո՝ բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ աշխատողի կողմից աշխատանքը փաստացի սկսելու օրվան նախորդող օրվա ավարտը, հարկային մարմին են ներկայացնում նոր աշխատողի գրանցման հայտ, որտեղ ներառվում են անհատական տեղեկությունները:

- Փաստաթղթերի՝ բացառապես էլեկտրոնային եղանակով դուրսգրմամբ պայմանավորված կամերալ (գրասենյակային) ուսումնասիրությունների իրականացման և ստուգման ակտերով պարտավորությունների առաջադրման համակարգի լայնածավալ կիրառում

ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 18.04.2016թ. N 24-Ա հրամանով հաստատվել են «Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքի պահանջների խախտման վերաբերյալ կամերալ (գրասենյակային) ուսումնասիրության հիման վրա կազմվող ստուգման ակտի նախագծի և ստուգման ակտի ձևերը, որոնք ծրագրավորվել և ներդրվել են հարկային մարմնի էլեկտրոնային կառավարման համակարգում: Արդյունքում 2016թ. նոյեմբեր և դեկտեմբեր ամիսների ընթացքում կամերալ ուսումնասիրություններով կազմված արձանագրությունների հիման վրա կազմվել են թվով 36 ստուգման ակտեր, որոնցով առաջադրվել է բյուջե վճարման ենթակա 24949.6 հազ. դրամ հարկային պարտավորություն:

- Արտադրության և ծառայությունների ոլորտներում գործունեություն ծավալող շրջանառության հարկ վճարողների գործունեության ռիսկերի գնահատում (պայմանավորված փաստաթղթերի՝ բացառապես էլեկտրոնային եղանակով դուրսգրմամբ), գործարքների փաստաթղթաշրջանառության հսկողության բարելավում

Բացառապես էլեկտրոնային եղանակով հաշվարկային փաստաթղթերի դուրս գրմամբ պայմանավորված՝ 08.01.2016թ. հարկային տեսչություններին տրամադրված «Հարկային (տարածքային) տեսչությունների վերլուծական խմբերի կողմից պարտադիր իրականացման ենթակա վերլուծական աշխատանքների նվազագույն գործիքակազմի» «հաշվարկային փաստաթղթերի վերլուծություն» բաժնում ընդգրկված են վերլուծության 6 տեսակներ, որոնց նպատակն է բարելավել գործարքների փաստաթղթաշրջանառության նկատմամբ հսկողությունը:

- Օպերատիվ հետախուզական միջոցառումների արդյունքում փնտրեսավարող սուբյեկտների կողմից առանց դուրս գրված համապատասխան հաշվարկային փաստաթղթերի ապրանքների տեղափոխման և ծառայությունների մատուցման հայտնաբերմանն ու բացահայտմանն ուղղված աշխատանքների իրականացում և փաստաթղթավորման նկատմամբ հսկողության շարունակականության ապահովում

2016թ. ընթացքում իրականացված օպերատիվ հետախուզական միջոցառումների արդյունքում տնտեսավարող սուբյեկտների կողմից առանց ուղեկցող հաշվարկային փաստաթղթերի կամ խախտումով դուրս գրված ուղեկցող հաշվարկային փաստաթղթերով արտադրանքի, ապրանքների տեղափոխման, առաքման դեպքերի բացահայտման նպատակով իրականացվել է՝ 1254 օպերատիվ հետախուզական միջոցառում, որից 1155 դեպքով կազմվել է վարչական ակտեր ընդհանուրը 722.4 մլն դրամ բյուջե լրացուցիչ վճարման ենթակա գումարով:

- Հարկման առումով (շրջանառության հարկով հարկվող) փոխկապակցված անձանց հայտնաբերելու նպատակով միջոցառումների իրականացում

Օպերատիվ հետախուզական միջոցառումների արդյունքում հայտնաբերված 6 դեպքով 12 տնտեսավարող սուբյեկտներ հարկման առումով (շրջանառության հարկով հարկվող) ճանաչվել են փոխկապակցված անձինք:

### **8. Մեկ հարկային հաշվի ներդրման նախնական աշխատանքների իրականացում**

- Ծրագրի գործարկումն ապահովելու համար ներքին իրավական ակտի ընդունում

Միջոցառման կատարման շրջանակներում՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից մշակվել և ՀՀ կառավարություն է ներկայացվել «ՀՀ հարկային օրենսգրքի կիրարկումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» ՀՀ վարչապետի որոշման նախագիծը, որտեղ ներառվել են նաև մեկ հաշվի ներդրմանն ուղղված համապատասխան իրավական ակտերը:

- Կազմվել է նախնական ծրագրի նախատեսված ծրագրային աշխատանքների 50 տոկոսի կատարում

Կազմվել է նախնական ծրագիր, որի համաձայն իրականացվել են ՀՀ ԿԱ ՊԵԿ «Հարկատու-3» էլեկտրոնային կառավարման համակարգի մոդուլների զարգացման տեխնիկական մասնագրերի պատրաստման աշխատանքներ:

### **9. Հարկային մարմնում տվյալների մշակման և վերլուծությունների իրականացման գործառույթների կենտրոնացում, մոնիթորինգի հիման վրա ռիսկերի գնահատում**

- Երևանում և Դիլիջանում միջազգային չափանիշներին համապատասխանող տվյալների մշակման կենտրոնների գործարկման հնարավորության ստեղծում: Այդ նպատակով՝

- ժամանակակից հաշվողական և ցանցային սարքավորումների ձեռքբերում, տեղադրում, փորձարկում

- անվտանգության չափանիշների համապատասխան տվյալների մշակման կենտրոնների ենթակառուցվածքի ստեղծում

- համապատասխան գլոբալ համակարգչային ցանցի ստեղծում

Միջոցառումը կատարված է: Երևանում և Դիլիջանում գործարկվել են միջազգային չափանիշների համապատասխանող տվյալների մշակման կենտրոններ: